ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2016 թվականի թիվ 129 -Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ>> ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կակառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 1017-Ն որոշումը՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությանն ու Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> N 1017-Ն որոշմամբ ՀՀ Տավուշի մարզպետարանին <<Այլ ընթացիկ դրամաշնորհներ>> հոդվածով հատկացված 3,000.0 հազ. դրամն ուղղել <<Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառման կազմակերպում>> միջոցառման իրականացման համար:
2. Մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ Ս. Դավթյանին՝ նախատեսված գումարը սահմանված կարգով հատկացնել <<Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառման կազմակերպում>> միջոցառման իրականացման համար:
3. Հանձնարարել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կ. Նազարյանին <<Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառման կազմակերպում>> միջոցառումը կազմակերպել ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատված ծրագրին համապատասխան:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կ. Նազարյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

18 հոկտեմբերի 2016թ.
ք. Իջևան